



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

664

ՀԱՍՏԱՅԱՆ ԱՂՋԻԿ

ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

ԲԱՏԵՐԱԿԱՆ ԻՍԿՆ ՄԷ

ԲԱՐԳԱՆՆԵԱՆ Ի ԳԱՂԱՔԱՆՆԵ

ՀԱՅԿ ՅԱԿՈՒՄ ՏԵՏԵՆԱՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴԻՌՆԵՒՆ

ՆԻ ՏԵՏԵՆԱՆ

1863

845

2-36

00-187
2

840
2366

~~164~~

ԱՐ ՀԱՍԿԱԲԱՂ ԱՂՋԻԿԸ




ՏՂՈՅ ՀԱՄԸՐ

ԹԵՏԵՐԱԿԱՆ ԻՍՂ ՄԸ




ՔԱՐԳՄԱՆԵՆԵՍ Ի ԳԱՂՂԻՆԿԱՆԵ

ՀԱՅԿ ՅԱԿՈՒՔ ՏԻՏԵՆՆԵ



Ի . ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՋՄԻՒՌՆԻՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԻՏԵՆՆԵ

1863

1008
P 35465

542003

41186

RECEIVED

NOV 18 1883

LIBRARY OF THE

UNIVERSITY OF CALIFORNIA

BERKELEY

1883

NOV 18 1883

RECEIVED

1883

Ը.Օ.Գ.

Այս բարոյական փոքրիկ Բատերական
խօսքին Թարգմանութիւնը 1855^հ աշգիւ
սւսումնասէր մտնկտւոյն նուիրելոյ, գի-
տաւորութիւնս անոնց փոքրիկ ճաշակ
մը տաչ էր այս տեսակ խօցարկութեանց
շրայօր :

Ուրախ եմ որ այս աշխատութիւնս ՚ի
շար չէ գացած, եւ անոր գտած ընդու-
նէշութեան եւ թանի մը բարեկամաց ին-
րախօսանքեն բաշաչերուելոյ, անոր երկ-
րորդ տպագրութիւնը ընէչ տաչու փու-
թացայ սիրոյ :

ԹԱՐԳՄԱՆԻՉՆ

Ա Վ Ձ Ի Ն Բ

Պ. Վ Ա Հ Ա Ն :

Ա Ա Ո Տ, Պ. Վ ա հ ա ն ն ա յ ս ր զ ի ն :

Ս Ա Թ Ի Ն Ի Կ, Պ. Վ ա հ ա ն ն ա յ ա ղ ջ ի կ ը :

Հ Ե Ղ Ի Ն Ե, ա ղ ք ա տ ա ն ց ե ա լ կ ի ն մ ը :

Վ Ա Ր Դ Ո Ւ Հ Ի, Հ ե ղ ի ն ն է ի ա ղ ջ ի կ ը :

Ա Ր Ը Ա Կ, ս ր ա հ ա տ ր ա ն :

Տե ս ա ր ա ն ը ն օր հ ն ձ ա ռ ա ծ օր ա թ ի մ է ջ է, ու ր
 տ ա կ ա ռ ի ն ք ա ն ի մ ը կ յ յ ա ս օր ա ն ն ք կ ա ն . մ է կ
 կ օ ղ մ ը ա ռ ն մ ը կ ը տ ե ս ն ա ի և մ ի ս կ օ ղ մ ը
 գ ի ռ զ ա ջ ի ն ն ք ու խ ր ճ ի թ ն ք և զ ա շ ա տ յ ի ն գ է
 դ ե ց ի կ տ ե ս օր ա ն ն ն ք :

ՀԱՍԿԱԲԱՂ ԱՂԶԻԿԸ

ՏՂՈՅ ՀԵՄԵՐ

ՔԱՏԵՐԱԿԱՆ ԻՅՂ ՄԸ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Թատարներ ցորենի որաներով լեցուն արտ մը կը ներկայացընէ :

ՎԱՐԴՈՒՆԻ, երբ յետեւումը հասկերով լեցուն իտալի մը
հարձակներէն (գտ. 1/1) Բունտ՝ ինչոյ որոյն մը բռն ինչոյն :

Ահա բաւական բան ժողովեցի, սրչափ պիտի ու
րախանայ իմ խեղճ մայրս, թէ որ տեսնելու ըլլայ :
(Կ. շէ գիւրդի վայ կը քնէ և համարի մէջ մը անոր
Քնէ ինչոյն) : Ո՛հ, ինչ բարի մարդ է եղեր աս
ձեր հնձողը, որ իմ կողովս լեցուց, Աթէ բոլոր
օրը ասդիս անդին վաղէի, երբէք ասոր կէսն անդամ
չպիտի կրնայի ժողովելու : Աստուած վարձահատոյց
ըլլայ անոր : Ահա գետնի վրայ ուրիշ հասկեր ալ
կը տեսնեմ, արդեօք մէկ կամ երկու բուռն չեմ :

կրնար առնուլ: (Երիտ- յե-օր հասկերը իրազէն Տեջ
 իւրէն) անշուշտ կոտորուի բաւական բան պիտի
 լինընեմ կողովին մէջ, բայց եթէ աս ալ չըլլայ՝
 ղենջակս քովս չէ: (Որտե՛ վայ ի՛նչէ, Տէ՛ յե-օր
 ղենջակին երիտ- ծայրերը իւր-նէ և Տէ՛-լու իւր-
 ր-սորտի ժողով-ծ հասկերը ղենջակին Տեջ Ինչէ, Բայց
 յանկարծ յայն՝ ճը իւր լէ): Ո՛վ Աստուած իմ, ահա
 մարդ մը, որ բարկութեամբ իմ վրաս կու գայ,
 բայց չեմ կարծեր որ ես անոր չարութիւն մ'ըրած
 ըլլամ . . . (Երիտ- յե իւր լու իւր Ինչէ և ան-
 ինչէ Ինչէ):

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՎԵՐԻՌՈՒՆԻ, ԱՐՇԱԿ.

ԱՐՇԱԿ, անոր թե՛ն Բ-նէլ

Ո՛հ, պղտիկ գող. ահա բռնեցի քեզի:

ՎԵՐԻՌՈՒՆԻ.

Ի՞նչ կ'ուզես ըսել, պարոն, ես պղտիկ գող մը
 չեմ, այլ համեստուհի պղտիկ աղջիկ մ'եմ, կը հաս-
 կընաս:

ԱՐՇԱԿ.

Ի՞նչ, պղտիկ համեստ աղջիկ մը, դո՛ւն համեստ
 աղջիկ: (Չե-տէն իրազէ իւր Ինչէ Ինչէ):

դուն համեստ աղջիկ մ'ես՝ այս կողովին մէջինները
ինչ են ուրեմն :

ՎԱՐԴՈՒՀԻ .

Հասկեր են, ինչպէս որ կը տեսնես :

ԱՐՀԱԿ .

Բայց աս հասկերը կողովին մէջը բուսած են :

ՎԱՐԴՈՒՀԻ .

Ո՛հ, թէ որ ինքնին կողովիս մէջը բուսած ըլ-
լային, արտերէն ժողվելու համար այնչափ նեղու-
թիւն չպիտի քաշէի :

ԱՐՀԱԿ .

Ուրեմն գողունի է :

ՎԱՐԴՈՒՀԻ .

Պարոն, այդպէս անարգաբար մի վարուիր հեաս,
կ'աղաչեմ, աւելի կ'ուզեմ անօթութեմէ մնոնիլ
մօբս հետ, քան թէ այդ ըսածդ ընել :

ԱՐՀԱԿ .

Բայց, ըսէ նայինք, աս հասկերը իրենք իրենց
մէ՛ կողովին մէջ մտած են :

ՎԱՐԴՈՒՀԻ .

Ո՛հ, ո՛րչափ կը վախցընես զիս քու սպառնալիք-
ներովդ . մտիկ ըրէ, այն արար դացած էի որ քիչ
մը բան ժողվեմ, հոն բարի ծեր մը կար, որ իմ
յոզնելս տեսնելով ըսաւ, խեղճ աղջիկը, ինչպէս

կ'աշխատի, կ'ուզեմ անոր քիչ մ'օգնել. իր արտին մէջ զիզուած որաներ կային, անկէջ կողովս լեցուց, այսպէս ըսելով. Ի՛նչ որ աղքատի մը տայ մէկը, Աստուած անոր փոխարէնը կը հատուցանէ և . . .

ԱՐՇԱԿ.

Ո՛հ, իրաւունք ունիս, այն արտին ծերը քու կողովդ հասկերով լեցուց, բայց մեր հասկերէն ինչո՞ւ կ'առնուս :

ՎԱՐԴՈՒՀԻ.

Թէ որ կուզես՝ կրնաս երթալ ու անոր հարցընել, և ան շիտակը կը խօսի :

ԱՐՇԱԿ.

Ի՛նչ պիտի երթամ, հոն վաղեմ. քու ուզածդ ալ աս է, որ մինակ մնաս ու անմիջապէս փախչիս, ես զքեզ բո՛նեցի հոս, ուրիշ վկայութեան կարօտ չեմ :

ՎԱՐԴՈՒՀԻ.

Բայց երբ քեզի կըսեմ որ ամենեին որայի մը դպչած չեմ, ղենջակիս մէջ ունեցած քանի մը հասկերն ալ գեանէն ժողվիցի, որովհետե կարծեցի որ հրաման կար : Բայց, թէ որ չես ուզեր, պատրաստ եմ ետ տալու, առ, ահա քու հասկերդ :

ԱՐՇԱԿ.

Ո՛չ, ո՛չ. աստուծոյ մէկաշնորհուն հետ հոս պիտի մնան, և պէտք է որ դուն ալ մնաս, ուրեմն եկուր ես և էս որ բանտը գնեմ զքեզ:

ՎԱՐԴՈՒՀԻ. երիւշուէ .

Ի՞նչպէս. ի՞նչ կըրես, սիրելիս:

ԱՐՇԱԿ.

Ո՛հ, այո՛, քու սիրելիդ եմ, աւելի սիրելի կ'ըլլայի թէ որ թողուի որ փախչիս, այնպէս չէ՛, եկուր բանտը երթանք, երթանք կ'ըսեմ քեզի:

ՎԱՐԴՈՒՀԻ.

Ո՛հ, կ'աղաչեմ, Աստուծոյ սիրոյն համար, յի՛րաւի կ'ըսեմ որ քեզի տուած մէկ բուռն հասկերս միայն ասկէ ժողվեցի, ի՞նչ պիտ'ըսէ մայրս, թէ որ այսօր տունը չգառնամ, երբ իմանայ թէ զիս բանտ դրած են, զուցէ կը մեռնի:

ԱՐՇԱԿ.

Ես հոս դրուած չեմ որ մարդիկներուն վրայ զթամ, այլ զանոնք բռնեմ՝ երբ իմ ախրոջս երկիրները կը մանեն ու զանոնք բանտ տանիմ:

ՎԱՐԴՈՒՀԻ.

Ի՛նչպէս երբ բան մը ըրած չեն, երբ ինձի պէս անմեղ են:

ԱՐՇԱԿ.

Այժմ, քու անմեղութիւնդ խօսէ ինձի, եկար աստեղէն մէկ կողով հասկ զողջար, և տեսակ տեսակ խաբէութիւններ կընես. երթանք, երթանք, ետեւէս եկու:

ՎԱՐԴՈՒՀԻ, որոյ է հռոմէացի.

Ո՛հ, սիրե լի պարօն, ողորմէ ինձի. թէ որ կ'ուզես իմ կողովս ալ առ. ամսո՛ս, իմ պղտի պաշարս զքեզ շտիտի հարստացընէ: Նայց թող զիս որ երթամ, կ'աղաչեմ, թէ որ ինձի չես խնայեր, խեղճ մօրս վրայ դու՛թ ունեցիր, որ ես անոր միայն միութարութիւնն և օգնութիւնն եմ:

ԱՐՇԱԿ.

Թէ որ թողում որ երթաս, չէ թէ մօրդ համար պիտի թողում, քանզի թէ և հարիւր մղոնի չափ հեռու տեղ ըլլար պիտի երթայի տեսնել. միայն քեզի համարէ. որովհետեւ քու լացդ քիչմը սիրտս կակղցուց. բայց մի կարծեր որ կողովդ հետդ պիտի առնես, դատաստանի համար կը պահեմ զայն. իսկ ուրբաթ օրը դատաւորաց ունկնդրութեան օրն է և Ս. զիւղապետը աղէկ տուգանք մը աալու պիտի պարտաւորէ զձեզ. թէ որ չի վճարէք՝ բանտը պիտի դրուիք, և զեզէն պիտի վճռաւորէ:
(Ա՛ւրճեւ որոն իւր) իւր քնէ, Ս. Գրքի մէջ Գրքի մէջ

պատճառով կուլայ և սպառ կ'էջնայ) : Ա՛հ, սիրտս մի նեղացընեք, եթէ ոչ՝ պիտի տեսնես թէ ասանկ ընելով ի՛նչ կը շահիս : (Արշակ իւ հեռանայ, հեռանալ) Թէ որ ամեն օր մարդ չըրտեսէ, կարծեմ թէ քեզի պէս պղտիկ դողերը արտերուն հողերը անդամ պիտի յափշտակեն :

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՆՏԻՊՈՒՆԻ, գեղեցիկ ինչո՞րք, գեղեցիկ որո՞յժ է լըս իւ
 իւրեքնէ իւրեքնէ քիչ է քեզ իւրայ. լեւնդե՞ն որ
 ի՛նչէ և իր սրտի՞ն ինչո՞րք :

Ա՛հ, երանի թէ դացած ըլլար աս անգութ մարդը, որ իմ ամեն ուրախութիւնս տարաւ : Ա՛մն բան կորուսի. հասկերս, գեղեցիկ կողովս գացին. և ո՛վ գիտէ ասկէ ուրիշ գեռ ի՛նչ պիտի հանդիպի ինձի և իմ խեղճ մօրս : (Վիշ ղը կ'էնչէն էր) Ի՛նչ երջանիկ են այս թռչունները, գո՛նէ անոնց թոյլ տրուած է որ ուղածուն շափ ցորենի հատերը ուտեն, իսկ ես . . . Բայց, ո՛վ գիտէ որ այսպիսի անգութ մարդ մը զանոնք իր հրացանովը սպաննելու շաշխատիր . . . Այրթամ զանոնք փախցընեմ ու ես ալ ասկէ հեռանամ, որովհետեւ կարելի է զիս ալ սպառժեն այս որային վըսյ քիչ մը :

զուխս հանդէպընելուս համար . . . Բայց ո՞վ են
արդեօք ասոնք որ հոս կուգան .

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԱՇՈՏ , ՍԱԹԻՆԻԿ , ՎԱՐԴՈՒՀԻ , ԿՐԻՍՏՈՍ ԿՐԻՍՏՈՍ .

ԱՇՈՏ .

Գո՞ւն ես , սղտի աղջիկ , մեր որաներէն հաս-
կերը գողցողը , որուն համար պահապանը զքեզ
բռնեց :

ՎԱՐԴՈՒՀԻ . Հեծիւրանօք լի ի՞նչա՞յ : պարտիւնէն :

ՍԱԹԻՆԻԿ . Եւ ի՞նչ Վարդուհի ինչու եկե՛ս ետե՛ս ի՞նչ էլ չես
եկի ՚ի ի՞նչ տուն :

Աշոտ , սղտի բարձի աղջիկ մը կ'երևայ , կը
տեսնես որ կուլայ և գուն ալ քու յանդիմանու-
թիւններովդ աւելի մի նեղեր զան . ժողված քիչ
մը հասկերը աշխատութիւնը անդամ չարժեր :
(Վարդուհի ի՞նչ տեսնուց) Խնդճ աղջիկ , ինչ ու-
նիս որ այդչափ կուլաս :

ՎԱՐԴՈՒՀԻ .

Ինչպէս չի լամ որ առանց պատճառի մը գիս
կ'ամբաստանեն և գուցէ գուք ալ յանցաւոր կը
կարծէք :

ԱՇՈՏ .

Յանցաւոր չես ուրեմն :

ՎԵՐԴՈՒՀԻ .

Ըէ՛ , հաւատացէք ինձի . այն արտը զացեր էի որ քիչ մը հասկ ժողվեմ . . . ծեր հնձող մը ողորմելով ինձի՝ կողովս հասկով լեցուց : Աւ ետքը հոս դալով ասդիս անդին ցրուած հասկեր անսայ և սկսայ ժողվել : Չեր անդուժ պահապանը զիս աս որային քովը գտաւ ու ինձի գող ես ըսելով կողովս անաւ և բանտ պիտի դնէր զիս , բայց ես այնչափ աղաչեցի և այնչափ լաղի մերս համար , որ թողուց ինձի որ երթամ :

ՍԵՔՒՆԻԿ .

Ա՛հ , շատ կ'ուզէի որ զքեզ բռնած տեսնէի , բարի հայր մը ունինք , որ շ'ուզեր որ աղքատաց դէռուժիւն ընեն և զքեզ անմիջապէս տեղդ պիտի խրկեր :

ԵՇՈՑ .

Ե՛յո՛ , և հիմա իսկոյն կողովդ ետ պիտի դարձընէ , ապահով եղիր :

ՎԵՐԴՈՒՀԻ , արտիտիւմբ :

Իրա՛ւ կըսես , ի՞նչ պիտի պարոնս :

ՍԵՔՒՆԻԿ .

Ե՛շտոն ու ես կ'երթանք և կ'աղաչենք . . . Հանդարտ եղիր : Հայրս մեզմէ ուրիշ բանի համար այնչափ գոհ չըլլար , սրչափ՝ երբ աղքատաց օգտին

Համար խօսելու ըլլանք անոր, յը կողովդ ետ դարձ
 ձքնել առ պիտի տանք առանց բան մը խօսելու :
 ՎԱՐԴՈՒՀԻ :

Ո՛հ, ո՞րչափ երջանիկ էք, սիրելի պզտիք քոյրս,
 որ մէկէ մը կարօտութիւն չ'ունիք և կրնաք ուրիշի
 ալ օգնել :

ԱՇՈՑ .

Սուրեմն խիստ աղքատ ես, սիրելի ազջիկ :

ՎԱՐԴՈՒԷԻ :

Ընչուչտ, աղքատ պիտի ըլլայ մէկը որ գայ հոս
 ու նեղութեամբ իր հացը հոգայ :

ԱՇՈՑ .

Ի՞նչ, հաց հոգալու համար է որ կու գաս հասկ
 ժողովելու, ես կը կարծէի թէ կը կարմրցնէք և
 ետքը կ'ուտէք, ինչպէս որ եղբայրս և ես գաղ-
 տուկ կընենք :

ՎԱՐԴՈՒՀԻ :

Ո՛հ, օրիորդ, մայրս և ես այս հասկերը կը
 ծեծենք և ցորենը ջաղացարանին կու տանք որ ա-
 լիւր ընէ հաց շինելու համար :

ՍԱԹԻՆԵԿ .

Բայց, խեղճ ազջիկ, ո՞րչափ բան կրնաս ժող-
 վել, և ան ալ ո՞րչափ ժամանակ կրնայ տեւել :

ՎԱՐԴՈՒՀԻ .

Ինչ կրնանք ընել . երբ մէկ կամ երկու օրուան ուտելիք ունենանք մայրս և ես , ապահով ենք որ երկու օր ալ աւելի պիտի ապրինք :

ԱՇՈՑ .

Ահա ուրեմն ուրիշ մէկ օրուան համար ալ այս երեք զահեկանը կու տամ որն որ բոլորովին նոր ըլլալուն համար միայն քովս մնացեր էր :

ՎԱՐԴՈՒՀԻ .

Ո՛հ , սիրելի պղտի պարոնս , այդչափ ստակ ինձի , ո՛չ , ո՛չ . շեմ համարձակիր առնելու :

ՍԱՅԻՆԻԿ , ծղոտել :

Այսչափ թող ըլլայ , առ . թէ որ քսակս վրաս ըլլար , աւելի կու տայի , բայց առ աս ու բան մը չես կորսնցըներ :

ԱՇՈՑ , ԴՐՈՒՆԻՍ անոր ներխոյանքներէն :

ՎԱՐԴՈՒՀԻ . իշխոյ՛նք ի տունս ԴՐՈՒՆԻՍ և անոր յետէ իշխոյ՛նք արտնոյ պարտիւններս :

ԱՇՈՑ .

Այս բաւական չէ : Հիմա բոլոր ուծովս պահապանին քով պիտի վազեմ և պիտի ըսեմ որ կողովը ետ տայ , եթէ ոչ

ՎԱՐԴՈՒՀԻ .

Ո՛հ , այս աշխատութիւնը յանձն մ'առնէք , բաւական է որ ինձի խօսք տուիք :

ՍԵՔՒՆԵՒԿ .

Ըսէ՛ ինձի , սէր կը բնակիք ,

ՎԵՐԴՈՒՀԻ .

Հոս մօտ գեղի մը մէջ :

ԵՇՈՑ .

Տակաւին գքեղ տեսած չէինք . թէպէտև ամեն տարի հնձելու ժամանակ հայրերնուս հետ հոս կու գանք :

ՎԵՐԴՈՒՀԻ .

Մեր հոս գալը ութ օր է միայն , բարի պատալի մը տունը , որուն անունը Մարգրիտ է , որ շատ սէր ցուցոց մօրս , ո՛հ , շատ մեծ սէր :

ՍԵՔՒՆԵՒԿ .

Ի՞նչ , պառա՛ւ Մարգրիտը :

ԵՇՈՑ .

Մենք կը ճանչնանք զան , աղքատ որմնագիրի մը այրի կինն է : Հայրս երբեմն բերել կու տայ զան պարտէզնուս մէջը աշխատցնելու համար :

ՍԵՔՒՆԵՒԿ .

Կ'ուզե՞ս զիս մօրդ տանիլ :

ՎԵՐԴՈՒՀԻ .

Ըսիկա իրեն մեծ պատիւ մը պիտի ըլլայ : Չեզի սէս ազնուական աղջիկ մը . . .

ՍԱԹԻՆԻԿ .

Այդպէս բան երբէք մի խօսիր , վասն զի մեր
հայրը չ'ուզեր որ մենք զմեզ ուրիշէ աղնուական
սեպենք , բայց թէ որ ուրիշ պատճառ մը չու
նիս

ՎԱՐԴՈՒՀԻ .

Ո՛չ , ուրիշ պատճառ մը չունիմ , այլ աւելի
կ'ուզեմ որ դուք ալ ինձի հետ կողովին և հաս
կերուն կորստեանը համար զան միտթարէք :
Բայց այն չար մարդը ինչ պիտ'ընենք որ մեզի
այնքան սպառնացաւ :

ԱՇՈՏ .

Երբեք անոր սպառնալիքներէն մի վախնար .
ինչու որ քոյրս ձեր տունը հետդ պիտի գայ , ես
ալ այն մարդուն ետեէն պիտի երթամ , ու ստու
գիւ . . . Կորէն պիտի դաս հաս :

ՎԱՐԴՈՒՀԻ .

Թէ որ հրամայէք որ դամ պատրաստ եմ ձեր
հրամանը կատարելու :

ԱՇՈՏ .

Հոս վերստին դալէդ առաջ կողովդ ձեռքդ պի
տի հասնի :

ՎԱՐԴՈՒՀԻ .

Գուցէ մայրս հետս կը բերեմ ձեզի շնորհակալ
ըլլալու համար :

ՍԱԹԻՆԻԿ .

Այնքա՛նք երթանք մենք մայրդ տեսնելու :

(Վարդուհիին յետեւէն բռնելով տնոյ հետ դուռն էլլէն) :

ՏԵՍԱՐԱՆ Ե .

ԱՇՈՏ , առանցին .

Որչափ երջանիկ ենք ես ու իմ քոյրս որ այս
խեղճ աղջիկին պէս՝ ապրելու համար ասդիէն ան-
դիէն հասկ ժողովելու ստիպուած չ'ենք . ճշմարիտ ,
այս աղջիկը ազնուականի պէս կը խօսի , բնաւ
մեր դիւղացի աղջիկներուն պէս աղտոտ ու ան-
մաքուր կերպարանք չ'ունի . ո՛հ , անշուշտ իմ հօր-
մէս պիտի առնեմ . . . բայց ահա հայրս Արշակին
հետ կու գայ . ո՛հ , կողովն ալ հետերնին է :

ՏԵՍԱՐԱՆ Զ .

ԱՇՈՏ , Գ . ՎԱՀԱՆ , ԱՐՇԱԿ :

(ԱՇՈՏ , հօրէ յիջեւէ)

Ո՛հ , որչափ աւրախ եմ , սիրելի հայր , զքեզ

տեսնելուս համար . . . (ԱՐՀ-ԿԿ) տուր ինձի այդ կողովը :

ԱՐՀԱԿ .

Կամաց , կամաց , պարոն , հիմա վզիս կը փսսես :

Պ . ՎԱՀԵՆ .

Այդ կողովը ինչ պիտի ընես , Աշոտ :

ԱՇՈՏ .

Այս կողովը պզտիկ տնանկ աղջիկի մ'է , որմէ այս անդուծ Արշակը այդ հասկերուն հետ առեր է , որն որ իրեն տուեր էին : Ամն բան կ'իմանաս , հայր :

ԱՐՀԱԿ .

Ա՛հ , ուրեմն անդ թուծիւն է պարտաւորութիւնը կատարելը , և դողերուն թող չտալը որ իրենց ուզածը ընեն : Արբ արտը բողբոլվին հնձուի , ուզածնուն չափ երթան ժողվեն . բայց որչափ որ դեռ որայ մը արտէն գուրս ելած չէ

ԱՇՈՏ , հէֆֆֆֆ .

Ինչո՞ւ արտերը ձիւնով ծածկուած ժամանակն ալ չէ՞ս ըսեր . երբ հունձքը ըմնայ , արտին մէջ շատ բան մնացած կ'ըլլայ , այնպէս չէ՞ :

ԱՐՇԱԿ.

Ասոր քու խելքդ չհասնիր, պարոն. երկրորդ՝
 ո՛վ կրնայ ըսել թէ ասոնք գող չեն :

ԱՇՈՑ.

Գո՛ղ մի, ո՛վ Աստուած, գո՛ղ ըսիր. սլախ
 աղջիկը ինձի ըսաւ թէ մէկ հասկ մը անգամ մեր
 արտէն առած չէ, և հոն մօտ արտի մը ծեր հնձող
 մը իր կողովը լեցուցեր է :

ԱՐՇԱԿ.

Բարի, ըսենք թէ այդպէս է. ըսենք թէ բոլոր
 ըսածը ճշմարիտ է. բայց մեր որային քովը ին
 բան ունի, ո՛ր ես բռնեցի զինքը :

Գ. ՎԱՀԱՆ.

Հասկերը ո՛վ հանեց :

ԱՐՇԱԿ.

Չեմ կրնար բան մը ըսել. բայց ինչ գիտեմ՝
 իմ դալէս առաջ ինչ ըրած էր : Սաև ստախօսու
 թիւն չէ՞ այս ըսածը թէ ծեր հնձող մը իր կողովը
 լեցրնէ. ո՛հ, ես աղէկ կը ճանչնամ մեր գիւղացիներ
 ըր, որոնք այսպէս գթասէր պարոններ են :

ԱՇՈՏ .

Դոս կը վկայեմ որ աս հասկերը իրեն տուին և վասն զի ինքը ինձի այդպէս ըսաւ , և թէ այսպէս աղէկ աղջիկ մը չկրնար սուտ խօսիլ :

ԱՐՉԱԿ .

Դուն ալ երբէք սուտ խօսեցած չունին , պարոն , բայց մենք քեզի մէկ բարի երիտասարդ մը կը կոչենք :

ԱՇՈՏ .

Տես , հայր իմ , ինչ կերպով այս չար Արշակը ինձի հետ կը խօսակցի : (Արշակին Բարի-Բեմբեմ) Ո՛չ , թէ որ սուտ խօսէի , մէկ դէշ տղայ մը պիտի ըլլայի . բայց ո՛չ ես սուտ կը խօսիմ և ո՛չ այն պղտի բարի աղջիկը , դուն ես մինակ . . .

Գ. ՎԱՀԱՆ .

Կամայ , Աշոտ , այդպէս պաշտպանելուդ դո՛հ եմ . բայց պէտք է որ մէկ բանին հակառակը մինչև որ աղէկ մը չհամողուի մէկը՝ ամեն մարդու բարի չըսէ : Սակայն , պէտք չէ բարկանալ անոնց որ ասկէ տարբեր կարծիք մը ունին . և պէտք է ջանալ անոնց հետ անուշուրթեամբ վարուելու մօտիւթարական և քաղցր կարծիքներով :

ԵՐՇԱԿ .

Ո՛չ, ո՛չ, պարոն, երբ մարդու մը շարութիւնը կը տեսնենք, ա՛լ տարակոյս չմնար : Ճամբան կովի մը պատահած ատենս՝ միշտ այնպէս կը սեպեմ որ իր եղջիւրներսօլը ինծի պիտի զարնէ և անոր առջևէն կը հեռանամ : Կարելի է որ աս կենդանին վնասակար չ'ըլլար . բայց իմ զգուշանալովս բնավ տանգ մը կրած չեմ ըլլար : Աւելի ստոյգը միշտ լուազոյնն է :

Գ. Վ.Ա.Հ.Ա.Ն .

Թէ որ ամեն մարդ այդ կերպ մտածութիւններ ընէր, Արշակ, որո՛ւն հետ պիտի կարենայինք ապրի՛լ : Ի՞նչ պիտի ընէիր դուն, թէ որ հացդ հողալու համար քեզի դորձ մը տալուս տեղը, ստուհակ մարդու մը պէս ստիկանութեան ձեռքը յանձնէի որ ո՛չ վկայական գիր ունէիր և ո՛չ անցագիր ք :

ԵՐՇԱԿ .

Այո՛, ճշմարիտ է, բայց նաև այն ալ ստոյգ է որ ես ալ մէկ բարի մարդ մ'եմ :

Գ. Վ.Ա.Հ.Ա.Ն .

Այդպէս ըլլալուն վրայ համոզուած ըլլալուս հա-

մար դքեղ քովս կը պահեմ. բայց աս ալ քու խօսքերէդ և կերպարանքէդ միայն այնպէս կը կարծեմ.

ԵՇՈՑ .

Ո՛ սիրելի հայր իմ, թէ որ խօսքերուն ու կերպարանքին նայելու ըլլաս, աւելի պզտիկ աղջիկին պէտք է հաւատաս քան թէ Արշակին :

ԵՐՇԵԿ .

Այո՛, պարօն, ինձի նայէ, հայրդ անշուշտ շատ զոհ պիտի ըլլայ այն պզտի աղջկանը կերպարանքէն, թէ որ անոր հաւնի ինչպէս որ ինձի ալ հաւնեցաւ

ԵՇՈՑ .

Այո՛, յիրաւի քեզի շատ կը վայելէ քու արջի դէմքովդ . . .

Պ . ՎԵՆԵՆ .

Ա՛յն է, Ա՛շոտ : Ա՛րշակ, այն պզտիկ աղջիկը կը ճանչնաս դուն :

ԵՐՇԵԿ .

Այո՛ կը ճանչնամ և չեմ ճանչնար, դիտեմ որ

10 — 12 օր կայ որ իր մօրը հետ հոս են . բայց
ինչպէս և ինչ կերպով հոս եկած են , Պ . գիւղա-
պետը միայն կրնայ ձեզի ծանօթութիւն տալ : Բան
մը ըսեմ ձեզի , պարոն , շատ գէշ կ'ընէ որ իր
իշխանութեան մէջ այսպիսի մարդիկներ կ'ընդու-
նի , որոնք հասարակաց ծախքովը կ'ապրին :

ԱՇՈՏ .

Քեզի ինչ , ես պիտի սնուցանեմ զանո՞ր այո ,
ես :

ԱՐՇԱԿ .

Ո՛ր է ստակդ , պարոն :

ԱՇՈՏ .


Թէ որ ես չունիմ , հայրս բաւական ունի :

ԱՐՇԱԿ .

Այսու ամենայնիւ բոլոր հասարակութիւնը կը
տրանջէ , սակայն երբ կաշառք կերցընեն (իւ հ-հրէ
Յե-ին հջ) . որովհետեւ կարծեմ թէ Պ . գիւղա-
պետը

ԱՇՈՏ .

Կայէ , ինչպէս անիրաւութեամբ կը խօսի Պ .
գիւղապետին վրայօք , կեցիր ըսեմ անոր :



Պ. ՎԱՀԱՆ.

Գու՛ն հոգ մ'ընե՛ր, տղաս. կը տեսնեմ, Արշակ, որ անկարելի է քու կասկածոտ միտքդ համոզել. բայց ես ալ ուրիշ կասկածներ ունիմ. դուն կ'ըսես թէ աս աղջիկը իր կողովը մեր արաէն լեցուցած է, որովհետեւ մեր արտին մէջ որայի մը քով գտար զինքը, և թէ Պ. գիւղապետը կաշառքով մէկ խեղճ գերդաստան մը ընդունած է իր գեղին մէջ: Բայց ես ալ կ'ըսեմ որ դուն պղտիկ աղջիկին կողովը ան բանին համար անոր ձեռքէն առիք որ խեղճը ստակ կամ քիչ մը քթախոտ չունէր տալու. ասոր համար է որ դուն չթողուցիր զան:

ԱՐՇԱԿ.

Ի՛նչ, պարոն, կրնայիք այդպէս հաւատալ:

Պ. ՎԱՀԱՆ.

Ինչո՛ւ չես ուզեր որ քու վրայօքդ դատեմ, ինչ տանն դուն ուրիշի վրայ կը դատես:

ԱՐՇԱԿ.

Ի՛նչ ընեմ, պարոն, աւելի ալէկ է որ լսեմ: Ասկէ ետքը թէ որ տեսնամ այն մուրացկանները ուսերէուն վրայ բարձած ձեր արտերուն արդիւնք.

ները . . . Կողովը Պ. դիւղապետին պիտի տարուի :

ԱՇՈՑ .

Ո՛հ , չէ , չէ , իմ սիրելի հայրս , կ'աղաչեմ :

Պ. ՎԱՀԱՆ .

Արշակ , այդ կողովը այն աղքատ կնոջը տունը պիտի տանիս և այն պղտի աղջիկէն թողու թիւն պիտի խնդրես :

ԱՐՇԱԿ .

Թողու թիւն խնդրեմ , պարոն , թողու թիւն . այդպէս պէտք է ընել , ես երթամ թողու թիւն խնդրեմ , և ինչո՞ւ :

ԱՇՈՑ .

Առանց պատճառի մը այնպէս խեղճ աղջիկին սիր-
աքը ցաւցընելուդ համար :

Պ. ՎԱՀԱՆ .

Արշակ , թէ որ բրածս անիրաւութիւն մ'է , ահա
ես պիտի երթամ կողովը տանիմ , և քու կողմէդ
թողու թիւն խնդրեմ :

ԱՐՇԱԿ .

Վանէ՛ կողովը դուն բռնէ , Պ. Աշոտ :

ԱՇՈՑ .

Ո՛Տ , բոլոր սրտովս , իմ սիրելի հայրս , պզտի
աղջիկը հիմա Սաթիւնիկին հետ հոս պիտի գայ ,
որ անոր մայրը միտթարելու գնաց :

ԱՐՇԱԿ .

Աւրեմն հոս ուրիշ գործք չունիմ ընելու : (Կը
հեռանայ որդիքէլէլ) Կը նայիմ որ մուրացկանները
այնչափ պիտի շատնան այս գիւղիս մէջ որ մեզի
ալ հարկ պիտի ըլլայ երթալ մուրալու :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե .

Պ . Վ Ա Հ Ա Ն , Ա Շ Ո Ց .

ԱՇՈՑ .

Սիրելի հայր իմ , կը լսե՛ս ինչ կ'ըսէ :

Պ . Վ Ա Հ Ա Ն .

Ըյո՛ւ , աղաս , բայց իրե՛ն աս բնութեանը սըրձ
տանց կը ներեմ :

ԱՇՈՑ .

Բայց ինչպէ՛ս կրնաս աս շարասիրտ մարդը քովդ
պահել :

Գ. ՎԵՀԵՆ .

Չարասիրտ չէ , աղաս , այլ մեր շահուն համար
իր ունեցած չափազանց եռանդն է , որ զինքը այսպէս
կը մտլորեցընէ . ան մեղի հետ սերաիւ կատուած է ,
և իր պարտաւորութիւնները ճշդիւ կը կատարէ :

ԵՇՈՑ .

Բայց թէ որ անիրաւ է :

Գ. ՎԵՀԵՆ .

Հիմա լսեցիր որ այդպէս չէ : Իր մինակ պակաս
սովթիւնը ան է որ իրեն պատուիրուած սահմանէն
անդին չանցնիր . ասկէ զատ՝ մարդերու և պարա-
զայից մէջ ճիշտ ընտրութիւն ընելու խելքը այն-
քան չհասնիր :

ԵՇՈՑ .

Բացատրէ ինձի ատ խօսքը , հայր իմ , կ'աղաչեմ :

Գ. ՎԵՀԵՆ .

Բոլոր սրտովս , սիրելիս , Արշակը գործքիս վրայ
գնելով , պատուիրեցի անոր որ իմ երկիրներս մըտ-
նող գողերը բռնէ ու գատաւորին առջևը հանէ :
Բայց ես աս հրամանը միայն ան թշուառական մար-
դոց համար ըրի , որոնք գողութեամբ և անառա-
կութեամբ կ'ապրին :

ԵՇՈՏ .

Ո՛Տ , կը հասկընամ . բայց Արշակը՝ ուտելու հաց չունեցող ու ուրիշներուն օգնութեամբը ասորող մարդիկը չարադործի տեղ կը դնէ , և չդիտեր երբէք որ ծերութեան , անխոնջ հիւանդութեանց կամ դժբաղդութեանց պատճառաւ անոնք աս վիճակին հասած են :

Գ . ՎԱՀԱՆ .

Շատ աղէկ , տղաս . վասն զի պարտակաները կը փոխեն բանին էութիւնը . օրինակի աղագա՛ դուն առանց մտածելու անոր հետ վիճաբանեցար . բայց դիտես որ աս պզտի աղջիկն ալ ամենեին սուտ չի խօսաց քեզի , և թէ իրօք մեր արտէն գողցած չէ աս հասկերը :

ԵՇՈՏ .

Ո՛Ն , սիրելի հայր իմ , անկարելի է :

Գ . ՎԱՀԱՆ .

Ինչո՞ւ անկարելի պիտի ըլլայ , տեղեկութիւն մը ունիս . դիտես դուն ո՛վ է ան աղջիկը , ո՛վ է անոր մայրը և ի՞նչ մտօք հոս եկան :

ԵՇՈՏ .

Ո՛Տ , երանի թէ անդամ մը անոր խօսիլը լսէիր :

իր լիզուն, իր դէմքը, և արցունքները. . . Այն-
չափ աղքատ է, որ հաց շինելու համար ափ մը
հասկի անգամ կարօտութիւն ունի: Ասկէ աւելի
տեղեկութիւն ինչ պէտք է. երբ մէկ խեղճ մը կը
տեսնամ որ անօթութենէ կը մնունի, պէտք է որ
անհոգ ըլլամ:

Գ. ՎԱՀԱՆ.

Այրիս, տղաս. և միշտ ատ ազնիւ հանդամանք-
ները աղքատներու վրայ ունեցիր և Աստուած ըզ-
քեզ կ'օրհնէ, ինչպէս որ զիս ալ օրհնեց այդպէս
զգացմունքներ ունենալուս համար, և քու փափուկ
սրտիդ մէջը միշտ կը զարգացընէ զանոնք: Քաղ-
ցրութիւնը միշտ խստութենէ նախամեծար է. բայց
անզգայութիւնը միշտ անիրաւութեան կը տանի. և
այն՝ որ մեր ողորմութիւնը կ'առնու ու աղէկ չի գոր-
ծածեր, իրն է յանցանքը և ո՛չ մերը:

ԱՇՈՑ.

Եւայց, սիրելի հայր իմ, այնչափ խոհեմութիւն
չէ Արշակին պէս մարդոց յանձնել տոնպիսի գործ
մը, որու մէջ անիրաւութիւն կրնայ գործուիլ:

Գ. ՎԱՀԱՆ.

Իրաւունք պիտի ունենայիր, տղաս, թէոր հը-

բաման տուած ըլլայի անոր որ ինքնիրեն ուզածը դատապարտէ կամ անպարտ ընէ: Աթէ իսկ ընելու ըլլայ, խիստ փոքրիկ անիրաւութիւն պիտի ըլլայ, որուն առաջը դիւրաւ կ'առնուի: Պ. գիւղապետը խիստ գիտուն, արդար և ազնիւ մարդ մը ըլլալով, անշուշտ իր գործը գիտէ. ան փոքր աղջկան և մօրը վրայով շատ զովութիւն ըրաւ ինծի երբ զանոնք իր գիւղը ընդունեց, և իմացուց ինծի թէ պառաւ Սարգրիտին տունը կը բնակին, որ մէկ համեստ կին մ'է:

ԱՇՈՑ .

Ի՞նչ թէ որ Արշակ պզտի աղջիկը ծեծած է, ինչպէս որ սպառնացեր է:

Պ. ՎԱՀԱՆ .

Չեմ կարծեր ատ աստիճան գործ մը ըրած ըլլայ. իրին հրամայած եմ որ ամենեին մէկուն վրայ ձեռք չվերցընէ, թէ և յանցաւոր մը բռնելու ըլլայ, եթէ ոչ իր գործը կը կորսնցունէ: Եւ իրեն տուած հրամաններս խստիւ կը բռնէ:

ԱՇՈՑ .

Ո՛հ, սիրական հայրս, ահա քոյրս ան պզտի աղջրկան հետը հոս կու գայ:

ՏԵՍԱՐԱՆ Ը.

Պ. ՎԵՀԱՆ, ԱՇՈՏ, ՍԱԹԻՆԻԿ, ՎԱՐԴՈՒՀԻ.

ԱՇՈՏ, իւրեւ յետեւ Վարդանի իւրեւ խոսելով.

Ա. քոյր իմ. ահա՛ կողովդ, մէջէն հասկ մ'ալ պակաս չէ :

ՎԱՐԴՈՒՀԻ.

Ո՛հ, սիրե լի՛ կողովս . . . Ո՛րչափ քեզի պարտաւոր եմ, իմ պզտի պարոնս : (Պ. Վահանը իւր տեսնէ :)
Ո՛վ է աս պարոնը :

ՍԱԹԻՆԻԿ, Դե՞ռի Կորե Դիմելով, և անոր վերջը պատելով.

Ա. մեր բարի հայրն է :

ԱՇՈՏ, Վարդանիին :

Ո՛հ, յիրաւի բարի հայր մի է. վախնալու բան մը չունիս : Եկուր, զքեզ անոր ներկայացընեմ : (Յառաջ ելնալով) Արշակը քեզի հետ այնպէս վարուելուն համար յանդիմանեց :

ՎԱՐԴՈՒՀԻ, խոսալով Դե՞ռի Կ. Վահանը իւր յառաջանայ և անոր յետեւ իւր պագնէ :

Պարոն, կը ներէք համարձակութեանս . . . Ո՛հ, որչափ բարի զաւակներ ունիք :

Պ. ՎԱՀԱՆ

Աշոտը իրաւունք ունի . զան տեսնելով չկրնար
 մէկը տարակուսիլ իր անմեղութեանը համար . այս
 վայելուչ կերպարանքը ու այս խօսակցութիւնը կ'ի-
 մացընեն որ աղէկ կրթուած է :

ՎԱՐԴՈՒՀԻ , յո՛ծ յայն՛ով Աշոտն է Ստիլիլի :

Արդեօք բարկացուցի՞ հայրերնիդ . առանձին կը
 խօսի :

Պ. ՎԱՀԱՆ , շո՛ւք տէտի :

Ո՛չ , սիրական աղջիկս , թէ որ զաւկըներս քեզի
 աղէկութիւն մը ըրին , քեզի արժանի եղածին չափ
 չըրին :

ՍԱԹԻՆԻԿ .

Աթէ արժանի իսկ չըլլար , պէտք չէ՞ր անոր
 օգնէինք : Ա՛հ , հայր իմ , թէ որ մէյ մը իր մայ-
 րը տեսնէիր :

Պ. ՎԱՀԱՆ .

Ո՛ւր է մայրդ , աղջիկս , ո՞վ ձեզի ըսաւ որ դաք
 աս գիւղը բնակիք , և ինչ բանով կ'ապրիք :

ՎԱՐՈՂԻՀԻ .

Կ'ապրինք . . . ո՛հ , Աստուած իմ , չեմ գիտեր

ինչով : Քիչով կամ ոչնչով կ'ապրինք . ցորեկը
 և երբեմն ալ դիշերը կար կարելով և մանելով
 կ'անցընենք հացերնիս շահելու համար : Պառաւ
 Սարգարիսը մօրս կ'օղնէ : Այսօր զիս արտերը
 խրկեցին , որ քիչ մը բան ժողվեմ : Ափսոս , իմ
 աշխատութիւնս չյաջողեցաւ :

ԱՇՈՏ

Կարծածիդ չափ ալ դէշ չէ : Քոյրս և ես հրաւ
 ման կը խնդրենք մեր հօրէն որ քեզի հասկ տայ :

Գ. ՎԱՀԱՆ

Բայց ո՞ր կը բնակէիք դուք յառաջուց :

ՎԱՐԴՈՒՀԻ

Կանթէրրի դիւղը , որ ասկէ քանի մը փարսախ
 հեռու է : Հսն շատ դժուարաւ կեանքերնիս կ'ան
 ցընէինք . պառաւ Սարգարիսը մայրս իր տունը
 հրաւիրեց , և անորմէ ոչինչ վարձք մը կ'առնէ :

Գ. ՎԱՀԱՆ . Ինչի՞րէն

Թէ որ այսպէս աղքատ մարդիկ բարերարութիւն
 կ'ընեն , մեր պարտքը աւելի պէտք է ըլլայ :
 (Վարդուհիէն :) Հայրդ դեռ կենդանի է և ինչ
 պաշտօնի վրայ է ,

ԱՇՈՑ .

Գրաւ կը դնեմ որ անոր հայրը գիւղացի չէ :

ՍԵԹԻՆԻԿ .

Ես ալ կը գրաւեմ, մանաւանդ քանի որ իր մայրը տեսայ :

ՎԱՐԴՈՒՀԻ, շԻՔԷԼԷ

Հայրս . . . Ո՛հ, չունիմ : Երբէք տեսած ալ չեմ
Երբոր ես ծնայ՝ ան մեռած էր : Ո՛հ երանի թէ
տակաւին կենդանի ըլլար :

Գ. ՎԱՀԱՆ .

Բայց դուն չես գիտեր թէ ով էր ան, և ինչ էր
նոր անունը :

ՎԱՐԴՈՒՀԻ .

Սայրս ինչո՞ք աւելի աղէկ կրնայ հասկցընել ձե
ղի :

Գ. ՎԱՀԱՆ .

Չեմ կրնար արդեօք հետը խօսելու :

ՍԵԹԻՆԻԿ .

Ո՛հ, այո՛ . հայր իմ, անձամբ հիմայ հոս սիւ
տի դայ . քիչ մը ժամանակ խնդրեց շտկուելու
համար :

Պ. ՎԱՀԱՆ .

Եւ սիլ զքեզ մեծցուց :

ՎԱՐԴՈՒՀԻ .

Մայրս միայն, սրբոն, ու ինձի կարգալ զրեւ սորվեցուց . հաւատոյ մէջը կրթեց, և հիմայ սլատկերահանութիւն դաս կուտայ :

Պ. ՎԱՀԱՆ .

Պատկերահանութիւն ըսիր, ալ չեմ տարակուսիր . ասիկա երևելի դերդաստանի աղջիկ է, որ դժբաղդութիւն սլատահելով, յետին կարօտութեան մէջ ինկած է :

ՍԱԹԻՆԻԿ .

Ո՛հ, ահա կուդայ :

ԱՇՈՏ .

Ե՛ս է մայրդ :

Պ. ՎԱՀԱՆ . Ինչի՞նչ :

Շատ կը բաղձամ որ աս դաղանիքը յայտնուի : Ես աղջիկը միտքս յիշատակութիւններ կը ձգէ : Բայց չեմ կրնար գեռ որոշել :

ՏԵՍԱՐԱՆ Թ .

Պ . ՎԱՀԱՆ . ՀԵՂԻՆԷ . ԱՇՈՑ . ՍԵԹԻՆԵՒԿ .

ՎԱՐԴՈՒՀԻ .

ՎԱՐԴՈՒՀԻ . Երբ Դիմել եր Պ . Վահանը Կեանքի և Գործի Կարգի :

Այլուր , մայր իմ , բնաւ մի վախճար . սպարոնը մեզի բարիք ընողներուն հայրն է , որ իր զաւակներէն աւելի բարեսիրտ է :

Հեղինակ . Վախճարի Կարգի և Ստեփանի Կարգի և Գործի Կարգի և Կրթի Կարգի :

ՍԵԹԻՆԵՒԿ .

Անհոգ եղիր , մեր բարի հայրը ամեն բան իմացաւ :

ՀԵՂԻՆԷ .

Հատ ուրախ եմ , պարոն , որ իմ վարդուհի աղջկանս վրայ չկասկածեցար :

Պ . ՎԱՀԱՆ .

Ձեր և ձեր աղջիկին կերպարանքը , տիկին , բաւական են ձեր ով ըլլալը իմանալու համար :

ԱՇՈՑ .

Անունը վարդուհի է , ով հայր իմ , անշուշտ ծնած չէ ասդիէն անդիէն բան ժողովելու .

ՀԵՂԻՆԵ՛ :

Հարկաւորութիւնը երբեմն անդուծ օրէնքները
կը լուծանէ . միայն թէ մարդ անպատիւ բան չը-
նէ . . .

Պ. ՎԵՀԵՆ .

Պէտք չէ երբեք աղքատութենէ ամչնալ, որով-
հետեւ աղքատութիւնը առաքինութեանց հետ դաշ-
նակից կրնայ ըլլալ . բայց կրնամ, տիկին, ձեր
ով ըլլալը հարցընելու :

ՍԵՔՒՆԻԿ .

Ընունը Լ ապոռիա է :

ՀԵՂԻՆԵ՛ :

Չեմ ուզեր, պարոն, որ իմ անունս ձեզմէ
պահեմ : Եւ կը տեսնեմ որ ստիպուած եմ ձեզի
յայտնելու զայն՝ ինչ վիճակի մէջ իյնալս ցուցը-
նելու համար : Բայց կ'ուզէի (որչա՛նքե՛րան նայելով)
աս դաղտնիքը ձեզի առանձին յայտնելու . չէ թէ
իմ իյնալուս վրայ կ'ամչնամ, բայց, թէ որ իմ
անունս ծանօթ ըլլար, այն ատենը այնպիսի մար-
դիկներ պիտի գտնուէին, որոնք երեսս վար առնե-
լու համար իրենց հաճութիւն պիտի սեպէին, վա-
սըն զի երբեմն յաջողութեան մէջ եզոյղը ինչպէս
որ պէտք է չվարուիր :

ԱՇՈՑ .

Ասկէ ետքը ըսե լիք խօսք չկայ :

ՍԵՔՒՆԻԳ .

Յիրաւի կ'ըսեմ, ո՛վ կ'ըլլայ նէ ըլլայ, Վարդուհին միշտ իմ սիրելի բարեկամս պիտի ըլլայ :

Գ. ՎԱՀԱՆ .

Հաւատա, տիկին, ես այդ պարադաները պիտի չհարցընէի, եթէ մտքիս մէջ դրած չըլլայի որ ձեզի օգնեմ :

ՀԵՂԻՆԷ .

Ազնուական բայց ո՛չ այնչափ հարուստ ընտանիքէ մը ծնած եմ ես . պզտիկութիւնս փարիզի մէջ անցուցի երեւելի տիկնոջ մը քով : Ութը տարի կայ որ պարոն Վրոյրին հետ ծանօթացայ, որ հիծելազօրաց հազարապետի տեղակալ մ'էր ու եկած էր քանի մը ամիս մայրաքաղաքիս մէջ մնալու :

Գ. ՎԱՀԱՆ .

Վրոյր, Վրոյր :

ՀԵՂԻՆԷ .

Իմ վրաս սէր ունեցաւ, ես ալ անոր առաքինու

Թիւնները տեսնելով՝ իմ սիրտս անոր տուի : Անոր հետ ամուսնացայ և հարսնիքէն քանի մը օր ետքը փրօվանսի մէջ իր ունեցած ստացուածքը դացինք :

Գ. ՎԱՀԵՆ .

Ո՛հ , այո՛ , ան է , ան է . և բոլոր անոր դիմաց դժադրութիւնը աս զաւակին վրայ կը նշմարեմ :

ՀԵՂԻՆԷ .

Ի՞նչ կ'ըսես , պարոն :

Գ. ՎԱՀԵՆ .

Լինցուր խօսքդ , տիկին , կ'աղաչեմ :

ՀԵՂԻՆԷ .

Որչափ որ կարելի է՝ կարճ խօսքով պիտի խօսիմ : Հաղիւ թէ այն հանդիստ առանձնութեան մէջ մեր նսանդակաթ միութեան քաղցրութիւնը կը ճաշակէինք . բայց աւճղ , պատերազմի մէջ էրկանս առողջութիւնը արուեցաւ , և սակաւատե ցաւալի հիւանդութենէ մը ետքը իր կեանքը վերջացուց :

ՍԱԹԻՆԻԿ , ՎԱՀԵՆ :

Խեղճ զաւակ , դեռաբոյս հասակէդ 'ի վեր որբ մնացեր ես :

ՎԱՐԴՈՒՀԻ .

Ափսոս , ծնանելէս ալ առաջ :

ՀեՂ.ԻՆԷ .

Երիկս զիս յղի թողուց , ու ես տրտմութեան մէջ աս զաւակը ծնայ . երբ էրկանս եղբարքը , որոնք խիստ և շահասէր մարդիկ էին , տեսան որ արու ժառանգ չի կայ , իր կալուածներուն տիրեցին , և որովհետև մեր ամուսնութեան հարկաւոր պայմանները դրելու օր օրի ուշացուցեր էինք , ուստի պարտաւորեցայ աղջիկիս և ինծի համար ձգածնուն վրայ գոհ ըլլալ :

Պ. ՎԱՀԱՆ .

Անոնց անարժան աղահալութենէն կը հասկնամ որ ձեզի ինկածը խիստ քիչ բան էր , և անչուշտ շատ ատեն շտեկեց :

ՀեՂ.ԻՆԷ ,

Անով քանի մը տարուան ապրուստս կրցայ հողալու փրօվանսի մէջ , ու կը յուսայի որ քիչ մը եկամուտ կը կապեն ժառանգորդները . վերջապէս երբ տեսայ որ իմ ակնկալութիւններս պարապը ելան , միտքս դրի որ Փարիզ իմ հին բարերարիս քովը դառնամ : Հոն հասնելով իմացայ որ մեռեր էր :

ան ատենը ուրիշ ճամբայ չի տեսայ ասրուստս հո-
ղալու, բայց եթէ դոհարներուս և զգեստներուս
մնացածը ծախելով ու բան բանելով քիչ մը ստակ
ձեռք ձգէի: Անթերրա քաշուեցայ հոն անձանօթ
կեանք մը վարելու համար. ուր բարեբաղդութեամբ
կնոջ մը հանդիպեցայ, որ առաջուց կը ճանչնայի,
և հիմա աս գիւղիս մէջ կը բնակի:

ՍԵՔՒՆԻԿ.

Հայր իմ, ըսածը պատաւ Մարդրիտն է:

ՀԵՂԻՆԵ.

Այս պատաւը քիչ մը առաջ իմ ձեզի խօսեցած
տիկնոջ քով կը ծառայէր. իր մէկ գէշ հիւանդու-
թեանը մէջ, իրեն շատ հոգ ունենալուս համար՝
իմ վրաս մեծ սէր ունեցաւ: Այժմ անոր յայտ-
նեցի. ինձի առաջարկեց որ դամ հոս բնակիմ, ուր
տեղ պիտի կրնայի աւելի առանձին ապրելու. ա-
նոր հիւրասիրութեանը պարտաւոր եմ: Այս որովհե-
տե մարդ չունի որ մեռնելու ժամանակը քովը կե-
նայ, իմացուց ինձի որ իր մեռնելէն ետքը իր պզտի
խրճիթը ինձի պիտի թողու: Ար տեսնես. . .

Գ. ԱԵՀԵՆ.

Բաւական է, տիկին. ես ան առատասիրտ կնոջ-

մէն աւելի մեծ բարերարութիւն պիտի ընեմ քեզի,
չատ ուրախ եմ որ պիտի կարենամ վերջապէս ազ-
նիւ էրկանդ ունեցած պարտքս վճարելու :

ՀԵՂԻՆԷ .

Ի՞նչպէս , պարոն , արդեօք կը ճանչնաս զան :

ԱՇՈՑ .

Ի՞նչ , աս բարի վարդուհիին հայրը :

ՍԵԹԻՆԻԿ .

Ո՛հ , սիրելի վարդուհի , կը տեսնեմ որ միշտ
մեզի հետ պիտի ըլլաս : Բայց ինչո՞ւ կուլաս :

ՎԱՐԴՈՒՀԻ .

Հոգ մի՛ ըներ , ուրախութենէս միայն կուլամ :

Պ . ՎԱՀԱՆ .

Ըն իմ կեանքս ազատեց , ինչ երջանկութիւն է
ինձի որ պիտի կարենամ աս բարերարութիւնը ա-
նոր կնոջ և զաւկին վրայ ցուցընելու : Գերմանիոյ
վերջին պատերազմին մէջ ես անոր հրամանատա-
րութեան տակն էի , սաստիկ խոնջեցած դժբաղդ
վիճակի մէջ կը գտնուէի , երբ ձիաւոր թշնամի մը
սուրը զլիսուս վրայ վերցուցած անմիջապէս պիտի
իջեցընէր , ու սպաննէր զիս , թէ որ հաղարսպեալի
տեղակալը անոր վրայ յարձակելով զիս շողատէր :

ՀԵՂԻՆԷ .

Անոր կերպարանքէն ես ճանչցեր էի, որ վե-
հանձնութենէ զատ շատ ալ քաջ էր :

Գ. ՎԱՀԱՆ .

Քանի մը օր ետքը, հրամայեցին որ զօրք ժող-
վեմ պատերազմին վտանդաւոր աւարտումը ընելու
համար. երկայն ատեն ընդդիմութենէ ետքը պա-
շարուեցանք ու ստիպուեցանք անձնատուր ըլլալ .
զօրքերս կողոպտուեցան. իմ զգեստներս և ստակ-
ներս առին : Պ . Վրոյր իմ վիճակս իմացաւ ու
զիս թշնամի զօրազլիւէն խնդրելով, ընգունած
վէրքիս համար տէտք եղած ամէն օգնութիւնները
ինծի ըրաւ : Երկու տարուանէ աւելի աւեց ինչ-
ուան որ աղէկցայ : Ու երբոր հայրենիքս դարձայ,
միայն իմ շնորհակալութիւնս յայտնելու չափ ժա-
մանակ ունեցայ, վասն զի շուտով նաւ տխրի մտնէի
Հնդկաստան երթալու : Ասկէ վեցը տարի առաջ
Գաղղիա վերադարձայ ու հոն մէկուն հետ ամուսնա-
ցայ : Ար պատրաստուէի դալ զան նորէն տեսնելու,
երբ իմացայ որ մեռեր է : Երբէք մտքէս չէր անց-
ներ որ անոր կիներ և աղջիկը այսպիսի գժրադդու-
թեան մէջ ըլլան, ինչպէս որ տրամութեամբ
հիմա կը տեսնեմ :

ՀԵՂԻՆԵ՛

Ո՛վ Եստուած, Եստուած, ի՛նչ հրաշալի ճա-
նապարհաւ զիս հոս բերիր :

ԱՇՈՏ . Վարդահի՛ն .

Ի՛նչ, հայրդ մեր հօրը կեանքը ազատեց :

ՍԱԹԻՆԻԿ .

Ո՛րչափ պարտական ենք զքեզ սիրելու :

Պ . ՎԱՀԱՆ .

Ելի՛ն, Վարդուհի, կորսնցուցած հօրդ տեղ
ահա զիս պիտի դտնես . որդիքս ալ նոյնպէս երկ-
րորդ մօր մը հարկաւորութիւն ունին, որ կորսն-
ցուցածնուն տեղը բռնէ : Սիրելի աղջկանդ տուած
կրթութիւնը (Վարդահի՛ն կը արտաբնայ և Պ . Վա-
հանին յետքէ կը պահէ) կը ցուցընէ թէ որչափ ար-
ժանի էք հանդիստ վիճակի մը հասնելու : Հիմա
ալ երկիւղ չունիք : (Վարդահի՛ն, որ դէռ ուր
յետքէ բնած էր) : Եւ յո՛, սիրելի աղջիկս, զքեզ
իմ զաւակացս պէս անտարբեր պիտի սիրեմ . դուն
քու քաջ հօրդ կենդանի պատկերն ես, և ինչպէս
որ հօրդ երախտասպարտ եմ, զքեզ ալ սիրելը իմ
պարտքս է :

ՀԵՂԻՆԵ՛ . որսխոսելամբ Պ . Վահանին յետքէ բնէլը :

Ի՛նչպէս պիտի կրնամ այդչափ բարերարութեանց

փոխարէնը ընել, պարոն: Միայն արցունքներս
բաւական են իմ սրտիս զգացմունքները ձեզի յայտ-
նելու:

ՍԱԹԻՆԻԿ, ՆՆԷՆԻԷՆ ԳՐԷԼՆԷ:

Ո՛ր իմ նոր մայրս, ուրեմն միշտ քովերնիս պիտի
ըլլաս Վարդուհիին հետ, պիտի տեսնես որ ինչ-
պէս պիտի ջանանք քեզի հնազանդելու:

ԱՇՈՑ.

Այո՛, Վարդուհին իմ երկրորդ քոյրս պիտի
ըլլայ, և այսուհետև պիտի շերթայ ասդիէն ան-
դիէն հասկ ժողովելու: Ո՛հ, չար Արշակ, ինչպէս
պիտի խայտառակեմ քեզի:

ՀԵՂԻՆԷ.

Իմ սիրելի որդիքս, ինչ ուրախութեամբ իմ
սիրտս կը լեցընէք, մէկ զաւակի տեղ ահա երեք
զաւակ ունիմ: Ո՛չ, բնաւ մայր մը ինձի չափ խնամք
և սէր պիտի չունենայ: (Պ. Վահանի): Աերե-
յէք, պարոն, որ երթամ աս ուրախալի լուրը իմ
բարեգութ Վարդրիտիս իմացընեմ, կը վախնամ
որ ուրախութենէ չմեռնի:

Պ. ՎԱՀԱՆ.

Խիստ աղէկ, տիկին, ես ալ պիտի երթամ ձեր
բնակարանը պատրաստելու:

ՍԵՔՒՆԻԿ .

Հայր իմ, հրաման կու տան որ իմ նոր մօրս
 ու Վարդուհին հետ երթամ :

ԱՇՈՑ .

Ես ալ շատ կ'ուզեմ անոնց հետ երթալ :

Պ . ՎԵՀԵՆ .

Խիստ աղէկ, զուակներս . բայց ետքը Հեղինէ
 տիկինը ու անոր աղջիկը հետերնիդ բերէք առանց
 բարի Սարգրիտան ալ մտնալու, որն որ կը հրա-
 շիրեմ նաև որ դայ մեր հետը ճաշէ :

ԱՇՈՑ : Վարդուհին՝ որ ինչու ինչու հետք քանի :

Ո՛չ, Վարդուհի, ասկէ ետքը ասիկա քուկդ չէ.
 կողովը հոս պիտի մնայ :

ՎԱՐԴՈՒՀԻ .

Ո՛հ, պարոն, ինչ որ տաք՝ ես աս կողովը չեմ
 կրնար տալ. որովհետև իմ ու մօրս երջանկութեա-
 նը և ձեզ ճանչնալու բարեբաղդութեանը պատ-
 ճառ եղաւ : Ո՛չ, իմ սիրելի պզտիկ կողովս, եր-
 բէք քեզմէ պիտի չբաժնուիմ :

Նրե՛ն ձեր իւրեքունի ինչու է մէջ ներս-թեմք իւրաքանչիւն :

ՍԵՔՒՆԻԿ .

Գո՛նէ հասկերը մէջէն հանէ որ աւելի թեթեւ
 ըլլայ :

ՎԱՐԴՈՒՀԻ .


Ո՛չ, այս հասկերը իմս են, որովհետև բարի
 ձերը ինձի տուաւ զանոնք . թէպէտև Արշակ ասոր
 հակառակը պնդէ : Վ'ուզեմ զանոնք պատաւ Մար-
 ցարիտին ընծայ տանիլ :

Գ. ՎԱՀԱՆ .

Իշկող տարուան հունձքին ժամանակը ձեր բա-
 րերարը պիտի չի մոռնանք , և այսուհետև իրեն
 բոլոր կենացը հարկաւոր եղածը պիտի հոգացուի :

ՀԵՂԻՆԻ .

Աստուած Վարձահատոյց ըլլայ ձեր առատաձեռ-
 նութեանը և ձեր ողջիքը օրհնէ :



0004805

Impresso di Venezia 664

May 1890

Benigno di Venezia

May 1890

Benigno

Impresso

20 13

May 1890

